ԿԱՐԾԻՔ

Սամվել Շավարշի Ասատրյանի «Բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հայաստանի Հանրապետության տարածքը աշխարհի ամենաակտիվ սեյսմիկ գոտիներից է, որում հաճախակի տեղի են ունենում տարբեր ուժգնության երկրաշարժեր: Այդ պատճառով էլ սեյսմիկ ռիսկերի կառավարումը հանրապետությունում պահանջում է իրականացնել հետևողական նախազգուշական և պաշտպանիչ միջոցառումներ, որոնք կապված են անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության հետ:

Սակայն այսօր Հայաստանի տնտեսության ընդհանուր վիճակի և անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով դեռևս վերացված չեն Սպիտակի երկրաշարժի հետևանքները: Այդ նպատակով անհարժեշտ է օգտագործել տարբեր ֆինանսական գործիքներ, ինչպիսին կարող է լինել ապահովագրությունը: Այն թույլ կտա վեր հանել և վերլուծել հասարակության առջև ծառացած բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնց լուծման համար նպատակահարմար է մշակել և իրականացնել համապարփակ ծրագիր՝ ուղղված բնական աղետներից բնակչության պաշտպանությանը, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանը:

ՀՀ-ում այսօր արդեն իսկ ձևավորված են ապահովագրության շուկայի հիմքերը, սակայն երկրի տնտեսական անվտանգության աստիճանի բարձրացման համար դեռևս ամբողջությամբ չեն օգտագործվում այդ շուկայի հնարավորությունները: Մինչդեռ բնական աղետներից ապահովագրման համակարգը սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացման կարևոր գործիք է և տնտեսության զարգացման արդյունավետ գործոն:

Բնակարանային և արդյունաբերական ֆոնդը պատշաճ մակարդակով պահպանելու համար Հայաստանի Հանրապետությունում մեծանում է սեյսմիկ ռիսկից

ապահովագրության կարևորությունը: Միաժամանակ բնական աղետների ռիսկի ապահովագրության շուկայի ձևավորումը կախված է սոցիալ-տնտեսական զարգացումից և համապատասխան օրենսդրական բազայից, քանի որ ապահովագրության այլ տեսակներ չեն կարող փոխհատուցել ավերիչ երկրաշարժից ֆինանսական կորուստները:

Նշված հիմնախնդիրների ուսումնասիրության և լուծումների որոնման անհրաժեշտությամբ և կարևորությամբ են պայմանավորվել ատենախոսության թեմայի ընտրությունը և նրա արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետությունում բնական աղետներից ապահովագրության համակարգի ձևավորման խնդիրները և մշակել դրանց լուծման մոտեցումներ և առաջարկություններ: Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել սեյսմիկ ռիսկի էությունը, դրա դրսևորման ձևերը և ազդեցությունը տնտեսության վրա,
- բացահայտել սեյսմիկ ռիսկի կառավարման խնդիրները և գնահատել պետության դերը դրանց լուծման գործում,
- ուսումնասիրել բնական աղետների հետևանքների վերացման միջազգային փորձը և գնահատել ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունները,
- գնահատել ապահովագրության և վերաապահովագրության դերը բնական աղետների հետևանքների վերացման և սեյսմիկ ռիսկի նվազեցման գործում,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական շուկայի վիճակը,
- գնահատել միջազգային ապահովագրության և վերաապահովագրության համակարգում ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների ներառման հնարավորությունները,

- վերլուծել Սպիտակի երկրաշարժի հետևանքով ՀՀ-ում վտանգված բնակարանային ֆոնդի վերականգնման դինամիկան,
- մշակել ՀՀ-ում բնական աղետների հետևանքների վերացման ռազմավարություն:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Բնական աղետների ապահովագրման համակարգերի ձևավորման տեսական և մեթոդական հիմունքները» դիտարկվում են բնական աղետները և դրանց հետևանքների հաղթահարման խնդիրները: Ներկայացված է բնական աղետների կառավարման համակարգը և գնահատված է դրանց ապահվագրման դերը՝ որպես վերականգնողական աշխատանքների գործուն մեխանիզմ: Հիմնավորվել է բնական աղետներից գույքի պաշտպանության նպատակով անհրաժեշտ իրավական դաշտի ձևավորման անհրաժեշտությունը:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Բնական աղետների ապահովագրման և վերաապահովագրման խնդիրները» ներկայացված է բնական բնույթի աղետալի ռիսկերի ապահովագրական համակարգերի ձևավորման միջազգային փորձի մանրամասն վերլուծություն, բացահայտվել են օրենսդրական և այլ բնույթի խնդիրները, գնահատվել է պետության դերը սեյսմիկ ռիսկերի կառավարման գործում, դիտարկվել են սեյսմիկ ռիսկերի մոդելավորման և գնահատման մոտեցումները:

Աշխատանքի երրորդ գլխում՝ «Բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» ներկայացված է Սպիտակի երկրաշարժից հասցված վնասի ընդհանուր բնութագիրը, վերլուծվել է աղետի գոտում բնակարանային ֆոնդի վերականգնման դինամիկան և վերականգնման աշխատանքների ձգձգման հիմնական պատճառները, առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում բնական աղետների ապահովագրության և վերաապահովագրության համակարգի ձևավորման մտեցումներ:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսի կողմից ներկայացված ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում.

1. Հիմք ընդունելով Հայաստանի և հարակից տարածաշրջանի սեյսմիկ ակտիվության վերլուծությունը, գնահատվել է սեյսմիկ ռիսկը և առաջարկվել է դրա կառավարման մեխանիզմները:

2. Որոշվել է պետության համակարգող դերը բնական աղետների հետևանքների վերացման գործում, առաջարկվել են դրա առաջնային գործառույթները՝ կենտրոնացնելով հիմնական ջանքերը սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ, մասնավորապես բնակարանային ֆոնդի վերականգնմանը:

3. Առաջարկվել են բնական աղետների ապահովագրման և վերաապահովագրման համակարգի ձևավորման մոտեցումները ՀՀ-ում՝ հիմք ընդունելով նման համակարգերի ձևավորման միջազգային փորձը և հաշվի առնելով հանրապետության առանձնահատկությունները:

4. Մշակվել են Հայաստանի Հանրապետությունում բնական աղետների հետևանքների վերացման հայեցակարգային մոտեցումները՝ հիմք ընդունելով մարզերում Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով պատճառված վնասի արդյունքների համակողմանի վերլուծությունը:

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական նշանակություն: Հետազոտության արդյունքները և առաջարկված մոտեցումները կարող են օգտագործվել հանրապետությունում բնական աղետների հետևանքների մեղմման և նվազեցման աշխատանքներում, ինչպես նաև երկրաշարժերի պարտադիր ապահովագրման համակարգի ներդրման մեխանիզմների մշակման և իրականացման գործում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսությունում ներկայացված սեյսմիկ ռիսկերի գնահատման և մոդելավորման դրույթները հեղինակը անհրաժեշտ է համարում իրականացնել ամբողջ երկրի մասշտաբով: Կարծում ենք, որ այդպիսի մոտեցումը անհրաժեշտ էր մանրամասնել ըստ երկրի առանձին սեյսմիկ գոտիների՝ հաշվի առնելով տարածքի յուրահատուկ առանձնահատկությունները և գործոնները:

2. Աշխատանքում բնական աղետներից բնակչության պաշտպանության և դրանց հետևանքների վերացման աշխատանքների իրականացման արդյունավետության նպատակով հիմնավորվում է համալիր ծրագրի մշակման անհրաժեշտությունը, որի կարևոր բաղադրիչներից մեկը, ըստ հեղինակի, բնական աղետներից պարտադիր ապահովագրման համակարգի ներդրումն է: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը անդրադարձ կատարեր այդ համակարգի ձևավորման մեխանիզմներին:

3.Ատենախոսության 17-րդ և 75-րդ էջերում, հղում կատարելով նույն սկզբաղբյուրին [15] հեղինակն օգտագործում է սեյսմիկ ռիսկի քանակական գնահատման երկու տարբեր բանաձևեր, որոնցից առաջինում ռիսկը գնահատվում է որպես հավանականություն, իսկ երկրորդում՝ որպես կորուստների մաթեմատիկական սպասում: Ռիսկի քանակական գնահատման նշված մոտեցումներում առկա է անհամապատասխանություն, ինչը հեղինակը չի մեկնաբանում:

4. Աշխատանքում տեղ-տեղ հանդիպում են նկարագրական բնույթի վերլուծություններ և հանրահայտ մեկնաբանություններ: Մասնավորապես, 1-ին գլխի 2-րդ՝ <<Բնական աղետների ռիսկերի կառավարումը>> պարագրաֆում շարադրված են ռիսկի վերաբերյալ հայտնի մոտեցումներ, սակայն բացահայտված չէ բնական աղետների ռիսկերի կառավարման հասկացության առանձնահատկությունները, ինչը կարող էր ելակետ հանդիսանալ հաջորդ պարագրաֆներում սեյսմիկ ռիսկերի կառավարման գործում պետության դերի գնահատման համար:

Եզրակացություն

Նշված դիտողությունները կրում են մասնակի բնույթ և էապես չեն կարող ազդել հետազոտության դրական արդյունքների վրա: Սամվել Շավարշի Ասատրյանի ատենախոսությունն ունի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որում դրված և լուծված են Հայաստանի Հանրապետության համար կարևոր խնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Սամվել Շավարշի Ասատրյանի «Բնական աղետներից ապահովագրման համակարգի ձևավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր՝ Լ.Հ. Աղաջանյան

Պրոֆ. Լ. Աղաջանյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀԱՊՀ գիտքարտուղար՝ Հ.Ա. Բալաբանյան

29.12.2019թ.